ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2026թ.ապրիլ 3-ի նիստի

Ներկա էին՝ պատմ. գիտ. դոկտ. Պրոֆ. Անուշավան եպս. Ժամկոչյան (խորհրդի նախագահ), պատմ. գիտ. թեկն., ասիստ. Ա. Յ. Բալյան (խորհրդի քարտուղար), պատմ. գիտ. թեկն., դոց. Ա. Է. Հովհաննիսյան, փիլ. դոկտ. Հ.Հ.Քյոսեյան, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյան, փիլ. գիտ. թեկն., դոց. Պ. Բարսեղյան (մեթոդ. խորհրդի նախագահ), բան. գիտ. թեկն. Վ.Ս. Մարտիրոսյան (արհբյուրայի նախագահ), պատմ. գիտ. թեկն., դոց. Ն.Ս. Միրզոյան, ասիստենտ Վ.Վ. Խաչատրյան, ՈՒԽ նախագահ՝ Դ.Գրիգորյան, ՈՒԳԸ նախագահ Ա.Թորոսյան, ուսանող Մ.Խալաթլան, Ա.Քոչարյան:

ՕՐԱԿԱՐԳ

ՊՀ հումանիտար և հասարակագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Գայանե Չոփուրյանի կողմից «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին (ՀՀ ԿԳՄՍ նախարարի «13» մարտի 2026 թ., N 390-Ա/2 հրամանի Հավելված N 2) ներկայացվող «Հայոց արվեստի ծագումը և պատմական զարգացումը. լեզվամշակութային ուսումնասիրություն» ծրագրի

ան Բիերի. «Աշխարհի և մարդու ծագումը ըստ Աստվածաշնչի և գիտության», Ռեժին Հունզիկեր-Ռոդվալդ. «Կյանք առնող իմաստություն. օձ-խաբեբան Ծննդոց 3-ում», Ռեժին Հունզիկեր-Ռոդվալդ .«Փոխակերպում. Ծննդոց 32-ի վերաիմաստավորում», Ռեժին Հունզիկեր-Ռոդվալդ. «Արցունքների և ծիծաղի միջև.կանանց պատկերները Հարավային Լևանտի մշակույթում», Ֆրեդերիկ Ռոնյոն. «Բիոէթիկայի հիմնախնդիրները» **Աստվածաբանական ժողովածուի վերաբերյալ պ.գ.թ. դոց. Ն. Միրզոյանի կարծիքի քննարկումը:**

նթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1 - ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Գայանե Չոփուրյանի կողմից «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին (ՀՀ ԿԳՄՍ նախարարի «13» մարտի 2026 թ., N 390-Ա/2 հրամանի Հավելված N 2) ներկայացվող «Հայոց արվեստի ծագումը և պատմական զարգացումը. լեզվամշակութային ուսումնասիրություն» ծրագրի հայտի հաստատման հարցը (զեկ.՝ Պ. Բարսեղյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պատմ. գիտ. դոկտ. պրոֆ. Ա. Եպս. Ժամկոչյան, փիլ. գիտ թեկն. դոց. Պ. Ա. Բարսեղյան, պատմ. գիտ. թեկն. դոց. Ա. Հովհաննիսյան, պատմ. գիտ. թեկն.դոց. Ա. Բալյան, կրտսեր գիտաշխատող Գայանե Չոփուրյան:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Գայանե Չոփուրյանի համաղեկավարությամբ և Վիկտորյա Խուրշուդյանի (Ֆրանսիա) ղեկավարմամբ «Հայոց արվեստի ծագումը և պատմական զարգացումը. լեզվամշակութային ուսումնասիրություն» ծրագրի գիտական հայտը՝ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու համար, և անհրաժեշտ թղթերը ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

Լսեցին 2. Ժան Բիերի. «Աշխարհի և մարդու ծագումը ըստ Աստվածաշնչի և գիտության», Ռեժին Հունզիկեր-Ռոդվալդ. «Կյանք առնող իմաստություն. օձ-խաբեբան Ծննդոց 3-ում», Ռեժին Հունզիկեր-Ռոդվալդ .«Փոխակերպում. Ծննդոց 32-ի վերաիմաստավորում», Ռեժին Հունզիկեր-Ռոդվալդ. «Արցունքների և ծիծաղի միջև.կանանց պատկերները Հարավային Լևանտի մշակույթում», Ֆրեդերիկ Ռոնյոն. **դոց. Ն. Միրզոյանի կարծիքի քննարկումը: Զեկուցող՝ Ն. Միրզոյան:**

Զեկուցողը նշեց, որ երկար սպասված այս ժողովածուն անդրադառնում է ուշագրավ թեմաների և հիմնարար հարցերի, որոնք առնչվում են Աստվածաշնչին, գիտությանը, էթիկային և կանանց վերաբերյալ Հին աշխարհի պատկերացումներին: Այն առաջարկում է մի շարք աստվածաշնչյան պատմությունների ինքնատիպ ու քննադատական ընթերցում՝ դրանք համադրելով ժամանակակից և միջգիտակարգային տեսանկյունների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ. ՀԱՍՏԱՏԵԼ Ն. Միրզոյանի կարծիքը տվյալ ժողովածուի վերաբերյալ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **փիլ. գիտ. թեկն., դոց. Պ. Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **պ.գ.թ. Ա. Յ. ԲԱԼՅԱՆ**